



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությանը անվճար իրավաբանական խորհրդատվության շրջանակներում ի թիվս այլ իրավունքների խախտման մասին գանգատների դիմել է աշխատամքային իրավունքի ոլորտում խախտումների վերաբերյալ բողոքներով:

Կազմակերպության կողմից 2014 թվականի հունվար-հունիս ամիսներին տրամադրված իրավախորհրդատվության արդյունքներում պարզել է, որ Կազմակերպությանը դիմած քաղաքացիների 2%-ը բողոքել են նրանից, որ աշխատողի կենսաթոշակի անցնելու ժամանակվանից հետո գործատուն հրաժարվում է շարունակել աշխատանքի վայրում ստացած վնասների հատուցումը:

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078 հոդվածը կարգավորում է քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ընթացակարգը: Նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված է նաև, որ «վնասը հատուցելիս հաշվի չի առնվում տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը)»:

Չնայած օրենսդրական կարգավորմանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը տարբեր վճիռներով տարբեր մեկնաբանություններ է տվել առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի և պատճառված վնասի փոխհատուցման կապակցությամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 14.10.2005թ. թիվ 3-2004 (ՎԴ) որոշման մեջ նշել է, որ «1928 թվականին ծնված Բ. Քալաշյանը արդեն վաղուց անցել է կենսաթոշակի, ուստի ճիշտ չէ նրան վճարել կորցրած աշխատավարձը, որովհետև առողջությանը հասցված վնասները փոխհատուցվում են միայն որպես **կորցրած աշխատավարձը վերականգնեցնելու միջոց**»:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2011թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԵԱՔԴ/2447/02/10 որոշմամբ Վճռաբեկ դատարանը արտահայտել է մեկ այլ դիրքորոշում, որը լիովին հակասում է թիվ 3-2004 (ՎԴ) որոշման մեջ արտահայտած իր դիրքորոշմանը: Դատարանը նշել է, որ «առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը»:

Պրակտիկայում, գործատուների կողմից կիրառելիություն է ստանում Վճռաբեկ դատարանի որոշումը, որով գործատուի կողմից վնասի փոխհատուցման պարտավորություն չի սահմանվում:

Սակայն դատարանները պաշտպանում է այն տեսակետը, որ անկախ նրանից՝ լրացել է անձի կենսաթոշակի անցնելու տարիքը թե ոչ, ստանում է վերջինս կենսաթոշակ թե ոչ, աշխատանքի ժամանակ աշխատողին պատճառված վնասի հատուցումը պետք է շարունակվի վճարվել գործատուի կողմից:

2014թվականի հունվար-հուլիս ամիսներին «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» Հասարակական կազմակերպությանը այդ խնդրի կապակցությամբ դիմած քաղաքացիներից մեկի գործով Կազմակերպությունը աջակցել է պաշտպանել իր շահերը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, այն է՝ պատրաստել վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատասխաններ:

Խնդիրն այն է, որ քաղաքացու գործատուն հրաժարվում էր շարունակել վճարել քաղաքացուն՝ աշխատանքային կենսաթոշակի անցնելու ժամանակվանից հետո աշխատանքի վայրում ստացած վնասների հատուցուման գումարը: Քաղաքացին դիմել էր դատարան՝ պահանջելով դատարանից պարտավորեցնել գործագուին շարունակել վճարվող աշխատունակության կորստի փոխհատուցման գումարը և գործատուից հոգուտ քաղաքացու բռնագանձել չվճարված փոխհատուցման գումարը:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է, սակայն գործատուն բողոքարկել է այն վերադատության կարգով: Վերադաս դատարանները ստորադաս դատարանների որոշումները թողել էին օրինական ուժի մեջ:

Իրավական հիմնախնդիրը

ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ «աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ» (հոդված 243): Մինևույն ժամանակ, «աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել **գործատուն**» (հոդված 244):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078 հոդվածը, իր հերթին, սահմանում է առողջության քայքայմամբ պատճառված վնասի հատուցման կարգն ու պայմանները: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կորցրած աշխատավարձը (եկամուտը) սահմանելիս տուժողին՝ հաշմության կամ առողջության այլ վնասի հետ կապված, նշանակված հաշմանդամության կենսաթոշակը, ինչպես նաև այլ կենսաթոշակներն ու նպաստները և այլ նմանօրինակ վճարները, որոնք նշանակվել են առողջության քայքայումից առաջ կամ հետո, հաշվի չեն առնվում ու չեն հանգեցնում վնասի հատուցման չափի նվազեցման (հաշվի չեն առնվում ի հաշիվ վնասի հատուցման):



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վնասը հատուցելիս հաշվի չի առնվում նաև տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը)»:

Պետք է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշումը համաձայն որի՝ ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդությունների և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնների 6-րդ կետի համաձայն՝ փոխհատուցվող վնասի գումարը հաշվարկելիս տուժողին մինչ աշխատանքային հաշմությունը կամ դրանից հետո նշանակված կենսաթոշակները (տարիքային, հաշմանդամության, և այլն) հաշվի չեն առնվում:

Նույն կանոնների 20 և 21 կետերի համաձայն՝ վնասի փոխհատուցումը կատարվում է աշխատանքային խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետևանքով տուժողի աշխատունակության կորստի՝ ԲԱՓՀ-ի կողմից սահմանված ամբողջ ժամանակաշրջանում: Վնասի փոխհատուցման հաշվարկված գումարը տուժողին կամ այն ստանալու իրավունք ունեցող անձանց վճարվում է լրիվ չափով, անկախ նրանց ստացած վաստակից, կենսաթոշակից, կրթաթոշակից ու այլ եկամուտներից:

Տվյալ որոշումը պաշտպանում է այն աշխատողների իրավունքները, ովքեր աշխատանքի ընթացքում ստացել են խեղում, և մինևույն ժամանակ աշխատողին պատճառված վնասի համար համապատասխան պարտականություններ է դնում գործատուի վրա:

Սույն նորմերի վերլուծությունից պարզ է, որ.

- 1. Գործատուն պարտավոր է սպահովել աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը,*



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2. Այն դեպքում, երբ աշխատանքի վայրում աշխատողը ստացել է աշխատանքային խեղում, գործատուն պարտավոր է հատուցել նրա առողջությանը պատճառված վնասը:

Վճռաբեկ դատարանը իր 27.12.2011թ. (թիվ ԵԱՔԴ/2447/02/10) որոշմամբ սահմանել է, որ առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը»:

Սույն խնդիրը 2012թվականին բարձրացվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, իսկ 2013թվականին ՀՀ Արդարադատության նախարարությունը տվել է պաշտոնական պարզաբանում ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.10.2005թ. թիվ 3-2004 (ՎԴ) քաղաքացիական գործի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանը անդրադառնալով սույն խնդրին նշել է. «Պաշտպանին հասցեագրած քաղաքացիների դիմումներից պարզ է դարձել, որ աշխատանքի ընթացքում ստացված արտադրական խեղման համար աշխատողին նշանակվել է վնասի փոխհատուցում, սակայն վնասի փոխհատուցումը վճարելը դադարեցվել է գործատուի կողմից՝ պատճառաբանելով, որ քաղաքացին ձեռք է բերել կենսաթոշակի իրավունք: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածը, որով կարգավորվում է վերոնշյալ խնդիրը, նման դադարեցման հիմք չի նախատեսում: Սակայն գրանցվել են դեպքեր, երբ ՀՀ աշխատանքի պետական տեսչության վարչության կողմից հղում է կատարվել ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2005թ. թիվ 3-2004 (ՎԴ) քաղաքացիական գործով որոշմանը և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 13.01.2006թ. թիվ 06-206 վճռին, որոնց համաձայն՝ ՀՀ վճռաբեկ և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտել են այն դիրքորոշումը, որ քաղաքացու կենսաթոշակի անցնելու հիմքով առողջությանը պատճառած վնասի հատուցման հիմքերը վերանում են: Գտնում ենք, որ նշված որոշումը կիրառելի է եղել միայն այդ գործի



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ըջանակներում և չի կարող կիրառվել որպես նախադեպային որոշում: Ավելին, Վճռաբեկ դատարանը իր 27.12.2011թ. (թիվ ԵԱՔԴ/2447/02/10) որոշմամբ սահմանել է, որ առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը»:

2013թ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրվել է պաշտոնական պարզաբանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1078 հոդվածի կապակցությամբ և սահմանել է, թե Վճռաբեկ դատարանի, որ որոշմամբ պետք է առաջնորդվել այդ հոդված կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների կարգավորման համար: Մասնավորապես՝ Արդարադատության նախարարությունը սահմանել է, որ «...2007 թվականի Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը ընդունելուց հետո Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դիրքորոշումներում արտահայտված դիրքորոշումները պարտադիր են: Հետևաբար, դատավարության մասնակիցներից այլ անձանց հետ հարաբերություններում կիրառելի են ոչ թե Հայաստանի հանրապետության վճռաբեկ դատարանի 2005թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 3-2004 (ՎԴ), այլ 2011թվականի թիվ ԵԱՔԴ/2447/02/10 որոշման մեջ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2011 թվականի դեկտեմբերի 27-ին թիվ ԵԱՔԴ/2447/02/10 որոշման մեջ անդրադարձել է քննարկվող հոդվածի բովանդակությանը: Այսպես, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը նշում է, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նպատակ է ունեցել առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած, այսինքն՝ չստացած աշխատավարձը կամ եկամուտը, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը հատուցելու եղանակով հնարավորինս վերականգնել տուժողի մոտ նախկինում՝ մինչ առողջությանը հասցված վնասը եղած վիճակը: Այսինքն՝ օրենքը



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

նախատեսում է քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման հետևյալ տեսակները՝

1. տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի) հատուցում, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ,
2. առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի հատուցում,
3. այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերի հատուցում:

Վերոգրյալից բացի, այլ տեսակի դրամական փոխհատուցում օրենքով նախատեսված չէ»:

Նշված որոշմամբ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 12-րդ մասի նպատակին՝ նշելով՝ «Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համեմատական վերլուծության արդյունքում գալիս է այն եզրահանգման, որ «**կորցրած աշխատավարձ**» կամ «**կորցրած եկամուտ**» հասկացությունն օրենսդիրն օգտագործել է՝ որպես աշխատունակության կորստի հետևանքով աշխատել չկարողանալու և համապատասխան աշխատավարձ (եկամուտ) չստանալու հետևանք, և այդ հոդվածով համապատասխան հատուցում ստանալու տուժողի իրավունքի նախատեսումն իրականում նպատակ է հետապնդում հնարավորինս վերականգնել վերջինիս իրավունքները, այսինքն՝ մինչև առողջությանը վնաս պատճառելը եղած վիճակը վերականգնելը, երբ *առողջությունը չվնասվելու դեպքում սովորական պայմաններում կաշխատեր և կստանար համապատասխան վարձատրություն*: Ինչ վերաբերում է 1078-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթին, ըստ որի՝ վնասը հատուցելիս հաշվի չի առնվում տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ նորմի իմաստն այն է, որ առողջության քայքայումից հետո աշխատելու դեպքում աշխատավարձ ստանալը չի վերացնում առողջությունը վերականգնելու փուլում



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձը (եկամուտը) և այլ վնասները ստանալու տուժողի իրավունքը»:

Թեև նշված գործում ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադառնում է միայն կորցրած աշխատավարձին, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մատնանշած նպատակը վերաբերելի է ն' առողջության քայքայումից առաջ կամ հետո նշանակված կենսաթոշակներին: Հետևաբար, քանի որ քայքայումից առաջ կամ հետո նշանակված կենսաթոշակը չի կարող դիտվել որպես առողջությունը վերականգնելու փուլում չաշխատելու հետևանքով չստացած, կորցրած աշխատավարձի (եկամուտի) հատուցում և մինչև առողջությանը վնաս պատճառելը եղած վիճակի վերականգնում, արտադրական խեղման համար աշխատողին տրվող վնասի փոխհատուցման վճարման դադարեցումը չի կարող օրինական համարվել քաղաքացուն կենսաթոշակ նշանակելու փաստի ուժով»:

Այսինքն, գործատուների այն դիրքորոշումը, որ աշխատողների կենսաթոշակի անցնելու ժամանակվանից պետք է դադարեցվեն նրանց առողջությանը պատճառված վնասի հատուցումը անհիմն է:

Բացի այդ, նմանատիպ հարցերի լուծման համար պետք է հաշվի առնել նաև է ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմանը:

Ցանկացած տեսակի կենսաթոշակը հանդիսանում է պետության կողմից հասարակության խոցելի խմբերի սոցիալական իրավունքների պաշտպանության իրացման մեխանիզմ՝ համապատասխան դրամական օգնության տրամադրման տեսքով, հետևաբար մարդու կենսաթոշակի անցնելը չի կարող զրկել իրեն օրենքով սահմանված մյուս իրավունքից՝ աշխատանքի վայրում վերջինիս պատճառված վնասի հատուցումից: